

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆԻ  
«ԵՐԱՆԵԼԻ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՇՈՒՐՋ

*ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

*բանասիրական գիտ. թեկնածու*

*ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղ*

**Համառոտ**

2018 թվականին լույս տեսավ Հարություն Հովնաթանի «Երանելի Մկրտիչ Սարգսյանը» (Զրույցներ, վկայություններ, մեկնություններ) ժողովածուն: Գրքում ներկայացված են բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս Հարություն Հովնաթանի ինքնատիպ «գրույցները» Մկրտիչ Սարգսյանի հետ, ինչպես նաև Մկրտիչ Սարգսյանի մի քանի գործերի վերաբերյալ Հարություն Հովնաթանի վերլուծություններն ու մեկնաբանությունները: Գրքում առաջին իսկ տողերից ամբողջանում է Մկրտիչ Սարգսյան մարդու, քաղաքացու, գրողի ու հասարակական գործչի կերպարը՝ նաև ներքին՝ հոգևոր ներդաշնակությամբ, նորովի ներկայացմամբ: Հոդվածի շրջանակներում քննարկվում են մերթ գրքի հեղինակի՝ Հարություն Հովնաթանի, մերթ Մկրտիչ Սարգսյանի ստեղծագործությունը և վերջիններիս զուգորդումները:

**Բանալի բառեր.** *Մկրտիչ Սարգսյան, Հարություն Հովնաթան, հարցազրույցներ, մարդ, գրող, հասարակական գործիչ, բանաստեղծություններ, նամականի, վեպ, վիպակ:*

2018 թվականին լույս տեսավ Հարություն Հովնաթանի «Երանելի Մկրտիչ Սարգսյանը» (Զրույցներ, վկայություններ, մեկնություններ) ժողովածուն: Գրքում ներկայացված են բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս Հարություն Հովնաթանի ինքնատիպ «գրույցները» Մկրտիչ Սարգսյանի հետ, ինչպես նաև Մկրտիչ Սարգսյանի մի քանի գործերի վերաբերյալ Հարություն Հովնաթանի վերլուծություններն ու մեկնաբանությունները:

Հոդվածի շրջանակներում մեր տեսադաշտում մերթ գրքի հեղինակի՝ Հարություն Հովնաթանի, մերթ Մկրտիչ Սարգսյանի ստեղծագործությունն է, ապա այս երկուսի մեջտեղում ինչ-որ մեկ այլ տարածք է, որտեղ երկուսն էլ կան, և տարբերակիչ սահմանը մի դեպքում ընդգծված է, մեկ այլ դեպքում երևակվում է տրամաբանական

դաշտում: Բոլորը՝ մի կողմից՝ Հարություն Հովնաթանի հեղինակային-գրողական, մյուս կողմից՝ մեր գրականագիտական-քննական դիտարկմամբ: Օգտագործված է վերլուծական մեթոդը:

«Գրողի հիմնական նյութը, եթե մի արտահայտությամբ ուզենանք ասել, մարդագիտությունն է»<sup>1</sup>, - Հարություն Հովնաթանի հետ հարցազրույցներից մեկում ասում է արձակագիր Մկրտիչ Սարգսյանը: Այս գիրքը նրա ու առաջին հերթին նրա մարդագիտության մասին է, գիրք, որտեղ աչքիդ առջև առաջին իսկ տողերից ամբողջանում է Մկրտիչ Սարգսյան մարդու, քաղաքացու, գրողի ու հասարակական գործչի կերպարը՝ ներքին՝ հոգևոր ներդաշնակությամբ. նա, ինչպես Հարություն Հովնաթանն է ասում, «գրելիս ներս էր նայում, և, ինչու չէ, ներսից էլ էր նայում»<sup>2</sup>:

«Ի վերջո, գիրք, գրվածը գրավոր կյանք է, մի ուրիշ վիճակ, մի ուրիշ պատկեր, բայց փորձանքով, խարդավանքով, խաբեությամբ լցված-լմնցած աշխարհի, այս խելահեղ աշխարհի ճամփեքով անցնող մարդը որքան կարիք ունի, Թումանյանի ասած, վատը լավ տեսնող, համբերող, ներող, սիրող մարդու»<sup>3</sup>, - սա մտքերից մեկն է Հարություն Հովնաթանի, նրա, ով նաև ցույց տվեց համբերող, ներող ու սիրող մարդուն: «Ինչպե՞ս եղավ, որ ես այս բաներն այսպես գրեցի, չեմ կարող ասել, չգիտեմ, միայն մի բան գիտեմ. ոչ թե գրեցի, այլ գրվեց, ձեռքը իմն էր, սակայն Մկրտիչ Սարգսյանի հոգին մասնակից էր գրին, ուրեմն հեղինակակից եմ համարվելու»<sup>4</sup>, - ասում է նա: Եվ ահա հենց այս հոգեկցության ծիրում էլ լույս աշխարհ են եկել նախ՝ հարցազրույցները արձակագիր Մկրտիչ Սարգսյանի հետ, մտքեր, որտեղ հանգամանակից խոսքով, գրողի ու ընդհանրապես մշակութային գործչի ներհուն փիլիսոփայությամբ պատասխանները և կամ թե գրուցակիցների մտերմիկ-գեղարվեստական խոսքուզուրույցը ականա վերածվում են ժամանակաշրջանի, իրադարձությունների, երկրում պահի դրությամբ հրատապ իրողությունների քննությանն ու վերլուծությանը: Մտքեր կան, որոնք ասվել են տասնամյակներ առաջ, սակայն այսօր էլ արդիական են, այսօր էլ պետք է սթափ գնահատել իրավիճակը, ինչպես գրողն է մի առիթով նշում, պարզապես սերունդներին «սովորեցնել

1 Հ. Հովնաթան, Երանելի Մկրտիչ Սարգսյանը (Զրույցներ, վկայություններ, մեկնություններ), Եր., Գրական հայրենիք, 2018թ., էջ 9:

2 Նույն տեղում, էջ 74:

3 Նույն տեղում, էջ 38-39:

4 Նույն տեղում, էջ 104:

հայրենասիրության գիտությունը,... որն այնքան անհրաժեշտ է երիտասարդությանը՝ մեր հողմածուփ դարում»<sup>1</sup>:

Ուշագրավն այն է, որ գրքում ներհյուսված են երկու կերպարներ՝ Մկրտիչ Սարգսյանինն ու նրա հոգեկցինը՝ իրենց առանձնահատուկ սիրով, հոգևոր կապով, նաև հող ու ջրի, միևնույն բնօրրանով միացած լինելու փաստով, ինչը քանիցս շեշտում է Հարություն Հովնաթանը: Նշանակում է՝ գրքի միևնույն էջում կարելի է հանդիպել երկու վառ անհատականությունների միաժամանակ. ժողովածուի ամբողջականության տիրույթներն իրենց ուրույն ակերով ընդգրկուն են՝ մարդ, քաղաքացի, գրող... Բաշխվածությունը հավասարաչափ է, այնպես որ երկուսի ներկայությունն էլ կարելի է միաժամանակ զգալ, մեկի միջոցով ճանաչել մյուսին և ճանաչելի դարձնել հայ իրականության երկու երանելիներին:

Բացի այդ, ժողովածուն հետաքրքիր է նաև՝ պայմանավորված կառուցվածքային առանձնահատկություններով. արված է որոշակիորեն համակարգված աշխատանք՝ հնարավորինս ամփոփ և միևնույն ժամանակ լիարժեք դարձնելու ներկայացվող մարդկային ու գրողական կերպարը:

Արձակագրի հետ հարցազրույցներին հաջորդում են գրողի նամակների մասին էջերը: Ընդ որում, այստեղ և՛ Մկրտիչ Սարգսյան գրողն է, և՛ նրա զավակը, ընտանիքն՝ ընդհանրապես, ապա և՛ ժողովածուի հեղինակը՝ իր այս ամենի հանդեպ ընդգրկուն վերաբերմունքով: Մյուս կողմից էլ, ինչպես ժողովածուի հեղինակն է անդադար շոշափում Վերինի անունը, այդպես էլ Մկրտիչ Սարգսյանն է ամեն պահի այդ անունը շուրթին՝ վկայությունն այն բանի, որ գոնե այս երկուսի կապը ակունքվում է Վերևից: Եվ եթե փորձենք առանձնացնել Մկրտիչ Սարգսյան մարդու և գրողի կերպարները՝ ըստ Հարություն Հովնաթանի, ապա առաջին հերթին նրա՝ «աստվածային կայծը կրող մարդու»<sup>2</sup> էությունն է՝ լցված «հոգևոր լույսով», ապա՝ դրանով պայմանավորված՝ նրա մարդ տեսակը՝ հայրենիքի, մարդու, իր նմանի, ընտանիքի, բոլորի և յուրաքանչյուրի հանդեպ ուրույն սիրով:

«Արյան կարգն ինչպես են որոշում: Մի կաթիլ վերցնելով և քննելով»: Այս նամակները, ահա, «իրենց կաթիլային ծավալներով»<sup>3</sup>

1 Նույն տեղում, էջ 11:

2 Նույն տեղում, էջ 61:

3 Նույն տեղում, էջ 82:

են բացահայտում գրողի մարդ տեսակը»,- բնորոշում է Հարություն Հովնաթանը: Իսկ «... ինչպիսի՞ բանաստեղծ է նա, հարց, որին փորձելու եմ պատասխանել: Այնպիսին է, ինչպիսին Մկրտիչ Սարգսյան արձակագիրը, մարդը, հայրենիքի զինվորն ու քաղաքացին... բանաստեղծությունն է, որ գտել, հայտնվել է նրան տեսիլքի պես ու խոսեցրել»<sup>1</sup>,- սկսելով խոսել Մկրտիչ Սարգսյան բանաստեղծի մասին՝ այսպես է ասում Հարություն Հովնաթանը:

*Հոգուս կրակը փված իմ երգին՝  
Բերել եմ ահա այն քո վերելքին...  
Թող հարիկ դառնա քո բերքի համար,  
Քար դառնա վաղվա քո շենքի համար<sup>2</sup>...*

Գրողի հայրենասիրության բանաստեղծական մի պատառիկ. արյան կանչն է այն պարզապես: «Հայ էր: Իմացա անմիջապես: Դեմքը խիստ էր, երբ քեզ չէր նայում, իսկ երբ աչքերը հառում էր գրուցակցին, դեմքը լուսավորվում էր մի տեսակ մանկական ժպիտով»,- Հ. Հովնաթանը մեջբերում է Մկրտիչ Սարգսյանի «Մերժանտ Կարոն» վիպակի առաջին իսկ տողերից<sup>3</sup>: «Մտածում եմ՝ ո՞ր էր նայում: Կարծում եմ՝ նայում էր իր ներսը, իր ճակատագրին էր նայում, իր կյանքի ճամփին, ինքն իր հետ էր, մոայլ էր...»<sup>4</sup>,- հավելում-ամբողջացնում ու լրացնում է Հարություն Հովնաթանը:

Թե՛ Մկրտիչ Սարգսյանը, թե՛ Հարություն Հովնաթանը երկար և որոշակիորեն խորհելու առիթ են ստեղծում՝ կյանքի մասին՝ անկախ ամեն ինչից, գրողի ու գրողների մասին՝ ընդհանրապես, մարդկային կենսակերպի, հատկապես, ընտրյալներին տրվող լուսավոր ներաշխարհի ու յուրաքանչյուր դրականի մասին:

Ուշագրավ է, որ Մկրտիչ Սարգսյանը մերթ Հարություն Հովնաթանի ձևակերպմամբ է ներկայանում, մեկ այլ պարագայում՝ սեփական տողերով: Ընդ որում, արձակագրի կերպարը միայնակ չէ. նա հայ գրականության մեծերի կողքին է, նրանց հոգևոր աշխարհի համապատկերում (Հ. Շիրազ, Հ. Սահյան, Հ. Թումանյան, Վ. Սարոյան, Ե. Չարենց և այլք):

1 Նույն տեղում, էջ 88:

2 Մ. Սարգսյան, Երկեր, Երկու գրքով, Գիրք առաջին, Հայաստան հրատ., 1976, էջ 92:

3 Մ. Սարգսյան, Ընտիր երկեր, Երկու հատորով, Հ. 1., Եր, Սովետ. գրող, 1988, էջ 566:

4 Հ. Հովնաթան, Երանելի Մկրտիչ Սարգսյանը, էջ 153:

Պատկերն առավել պարզ լինելու համար ներկայացնենք որոշ հատվածներ ժողովածուից: Այսպես՝ խոսելով Մկրտիչ Սարգսյանի ձայնի մասին՝ հեղինակը նախ հարցին ուրույն փիլիսոփայական մոտեցում է ցուցաբերում՝ շեշտելով. «...ձայնը մարդն ինքն է, մարդու էությունն է, բնավորությունը...», ապա և մեջբերում է հայ պոեզիայի լավագույններից մեկի՝ Հ. Սահյանի միտքը՝ փաստելով նրա խոսքը նույն ձայնի վերաբերյալ. «Տիեզերքում ձայնը չի կորչում, ոչ մի բան չի կորչում»<sup>1</sup>: Կամ մեկ այլ դեպքում՝ գրքի «Ջանց չառնենք Չարենցի պատվիրանը» ենթագլխում, խոսելով ազգի «սոցիալ-տնտեսական և մյուս բոլոր խնդիրների» մասին՝ հեղինակը առանձնացնում է հատկանշականը. «Բոլոր խնդիրներից բարձր պիտի դասվի ազգի բարոյականությունը՝ զանց չառնելով Չարենցի հայտնի պատվիրանը»<sup>2</sup>: Մեկ ուրիշ անգամ՝ «Նա տիրապետում էր մարդուն չարությունից հեռացնելու արվեստին» ենթագլխում, Հ. Հովսեփանը վերհիշում է. «Հայրենական մեծ պատերազմի դաշտից բերեց դառը փորձ ու հոգեցունց հիշողություններ, որոնք գիրք մտան որպես դաս սերունդներին: ... Մկրտիչ Սարգսյանը սերունդներին կապող, մի սերնդի լավագույն հատկանիշները մյուսին հանձնելու շնորհը նույնպես ուներ: Շարունակ խոսում էր իր տեսած Իսահակյանից, Դերենիկ Դեմիրճյանից, Ջորյանից, Ջարյանից, Գեղամ Սարյանից, Մարտիրոս Սարյանից և ժամանակի մյուս մեծերից»<sup>3</sup>: Կամ՝ մեկ համեմատություն-ընդհանրացում ևս: Խոսելով Մկրտիչ Սարգսյանի «մանկական ժպիտ» արտահայտության մասին՝ Հ. Հովսեփանը բերում է տեղին գուգահեռներ նշվելիք չորս հեղինակներից. «Չորս հայ հեղինակ, չորսն էլ օտարության մեջ. Վիլյամ Սարոյանը՝ խելահեղ աշխարհում, Մկրտիչ Սարգսյանը՝ պատերազմի դաժան դաշտում, Հովհաննես Թումանյանը՝ անձայրածիր տիեզերքում, Վահան Տերյանը՝ խառնարան Մոսկվայում: Այս չորսն էլ ոչ միայն հայ են, այլև Հայաստան են, սահման չճանաչող Հոգևոր Հայաստան»<sup>4</sup>:

Հետաքրքրական են գրողի ու հուշագրողի մտքերի բոլոր գուգորդումները: Ահա սա էլ գալիս է հերթական անգամ հաստատելու վերը նշված խոսքը, թե նրանց միաձուլումը մեկ գրքում առաջին

1 Նույն տեղում, էջ 297:

2 Նույն տեղում, էջ 37:

3 Նույն տեղում, էջ 39:

4 Նույն տեղում, էջ 153:

հերթին պայմանավորված է եղել երկուսի հոգեկցության անժխտելի հանգամանքով. ամենևին էլ պատահական չէ, որ սա Հարություն Հովնաթանն էլ է փաստում. «...իրականում իմ ներաշխարհում է, այն է՝ ներս նայելով տեսա այն բարի մարդուն, որ մի ժամանակ դրսում էլ կար, մարմնով էլ...»<sup>1</sup>:

Ապա հաջորդում է արձակագրի և նրա ստեղծագործությունները քննողի, վերլուծողի գործը, որը, ինչ խոսք, բոլորովին այլ նյութ է, և մեկնաբանություններն էլ յուրօրինակ լինելով՝ նաև ասես անց են կացվում երկուսի միջով, գտվում են, ու այդ բյուրեղացած «խառնուրդը» իր բացառիկությամբ «նստում» է ընթերցողի քիմքին:

Գրքում միայն մեկ կամ մի քանի մտքերի խորությանը չէ, որ հանդիպում ենք՝ այն էլ մեկի ճանապարհը մյուսի միջով, կարելի է ասել՝ դռնով է անցնում. բազմաթիվ են այս խոհ-դռները՝ մտքերի հոսքի ինքնահատուկ հերթագայությամբ, գրքի հեղինակի՝ Հարություն Հովնաթանի, Մկրտիչ Սարգսյանի, ապա այս երկուսի մեջտեղում ինչ-որ մեկ այլ խոհ-մտորում է, անցումային մի տարածք, որտեղ երկուսն էլ կան, և տարբերակիչ սահմանը մերթ ընդգծված է, մերթ երևում է տրամաբանական դաշտում: Իսկ մեկ բանաձևով՝ գուցե թե սա այս երկուսի հոգևոր, էներգետիկ դաշտերի միաձուլումն է՝ արտահայտված նախ զգացականության համակարգում, ապա և՛ գրավոր-գրքային տարբերակով: «...Երանելի էր այս երկխոսության մեջ հայտնվելը, որ տեղի ունեցավ հոգու հաղորդակցությամբ»<sup>2</sup>, - այսպես է ներկայացնում Հարություն Հովնաթանը: Այս տողերը ներկայացնում ենք որպես ժողովածուի ինքնատիպ ամփոփում:

Այսպես՝ ժողովածուն ներքին բաժանումներով ներառում է խոհական-փիլիսոփայական մոտեցումներ՝ Մկրտիչ Սարգսյան արձակագրի, բանաստեղծի, հայրենասերի, հասարակական գործչի, որոնք, ի դեպ, ակնհայտ են նրա բոլոր ստեղծագործություններում՝ անկախ ժանրային տարանջատումներից, և, ի վերջո, Մկրտիչ Սարգսյան մարդու մասին: Ցանկանում ենք առանձնացնել այս հանգամանքը ևս: Այս առումով ժողովածուն հետաքրքիր է և, քնականաբար, նաև կարևոր: Գրողին լայն առումով ներկայացնողը նույն բժախնդրությամբ, մեծագույն պատասխանատվությամբ ու խորին ակնածանքով է մոտենում այս խնդրին ևս: Արդյունքը հաջողված

1 Նույն տեղում, էջ 296:

2 Նույն տեղում, էջ 104:

պետք է համարել: Իսկ գրողին այդչափ խորությամբ ներկայացնելու գործում պարզ է՝ իր նշանակությունն ունի նաև նրա հետ նույն ժամանակաշրջանում ապրելու և արարելու հանգամանքը: Ականատես-վկայի տեսանկյունից է Հարություն Հովսեփանը մոտենում հեղինակի ապրած իրականությանը՝ վկայակոչելով նաև սեփական հույզերն ու զգացողությունները, դիմելով հուշերի պատառիկներին, որոնք, անշուշտ, հարագատորեն թանկ են դարձել իր համար: Իսկ ինքը՝ բուն շարադրանքը հնչում է ասես ավետարանական միտք-տողերի նման, վկայելու պես. «Ով հիշում-տեսնում է, վկայելու է. Մկրտիչ Սարգսյան մարդու դեմքը սրբագործված էր և չունեի նենգության նշույլ: Փոխարենը դեմքին լույս էր, որի շնորհիվ շարունակում է մեր մեջ ապրել այսօր էլ՝ ցրելով մեր ճանապարհի խավարը»<sup>1</sup>, - կարդում ենք գրքի «Մկրտիչ Սարգսյան մարդը» ենթագլխում: Պետք է հատկապես շեշտել այն հանգամանքը, որ մի կողմից՝ նորովի ներկայացնելով հարցազրույցի ժանրը՝ Հարություն Հովսեփանը այլ մոտեցում է ցուցաբերում գրական այս երևույթի նկատմամբ, մյուս կողմից՝ ակնհայտորեն բազում թելերով կապված լինելով Մ. Սարգսյան գրողի ու առաջին հերթին մարդու հետ, ժողովածուում նաև ինչ-որ չափով գուտ վավերագրական-հարցազրույցային տեսակից սահուն անցում է կատարում դեպի գեղարվեստականության, դեպի դրամատիկ-հուզագագացական աշխարհի նրբին երևակումներ:

Պարզ է, որ անդրադարձը միայն Մկրտիչ Սարգսյանի ստեղծագործություններին լայն ու ծավալուն թեմա է, մյուս կողմից՝ մեկ այլ ընդգրկուն թեմա է Հարություն Հովսեփանի հարցազրույցներին անդրադարձը, սակայն այս հողվածի սահմաններում նշենք նաև նրանցից յուրաքանչյուրի մոտեցումը գրականությանը, խոսքում, ստեղծագործություններում գեղարվեստական պատկերավորման միջոցների գործածությանը: Նախ՝ Մկրտիչ Սարգսյանը, ապա և Հարություն Հովսեփանը անմիջական ու պարզորեն գեղեցիկ ներկայացնում են իրականությունը: Դրան ավելացրած բնության նկարագրություն-արտահայտությամբ ընդգրկուն կտավ-պատկերները՝ ներկայացված արձակագրի ստեղծագործությունները հանգամանորեն քննության առնողի կողմից:

Ամփոփելով մեր խոսքը Հարություն Հովսեփանի «Երանելի Մկրտիչ Սարգսյանը» ժողովածուի մասին՝ նշենք, որ հեղինակն այս գրքում ներկայացնում է Մկրտիչ Սարգսյան մարդու, քաղաքացու, գրողի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 296:

և հասարակական գործչի դիմանկարն ամբողջությամբ՝ հեղինակի ստեղծագործություններից մի քանիսին նորովի անդրադարձ կատարելով («Մկրտիչ Սարգսյանը և նրա «Քաջ Նազարը», «Սերժանտ Կարոն», «Կյանքը կրակի տակ» և այլն): Ուշագրավ է նաև Հարություն Հովսեփյանի՝ հարցազրույցի ժանրը նոր, այլ հարթության վրա ներկայացնելու հանգամանքը:

## SUMMARY

### **Harutyun Hovnatán about «Blessed Mkrtych Sargsyan's» Collection**

*Karine Martirosyan*

*PhD of Philological Science of SAFAA /Gyumri Branch/*

Harutyun Hovnatán's "Blessed Mkrtych Sargsyan" collection was published in 2018. The book presents the original "conversations" of the poet, the translator, publicist Harutyun Hovnatán with Mkrtych Sarghsyan, as well as Harutyun Hovnatán's analyzes and comments about several works of Mkrtych Sargsyan.

This book is about Mkrtych Sargsyan. In the book, the first lines are at your sight. It is the image of Mkrtych Sargsyan, a citizen, a writer and a public figure, is incompatible. The inner, spiritual harmony of Mkrtych Sargsyan, is produced with a new presentation.

**Keywords:** *Mkrtych Sargsyan, Harutyun Hovnatán, interviews, man, writer, Social Worker, poems, the letter, novel, novelette.*

## РЕЗЮМЕ

*Карине Мартиросян*

*Кандидат филологических наук*

*Гюмрийский филиал ГАХА*

### **Размышления о сборнике Арутюна Овнатана "Блаженный Мкртич Саргсян"**

В 2018 году вышел в свет сборник Арутюна Овнатана «Блаженный Мкртич Саргсян» /Беседы, свидетельства, толкования/. В книге представлены оригинальные «беседы», поэта, переводчика, публициста Арутюна Овнатана с Мкртичем Саргсяном, а также анализ и комментарии Арутюна Овнатана по нескольким работам Мкртича Саргсяна.

В книге первые строчки перед вашими глазами - это образ Мкртича Саргсяна, гражданина, писателя и общественного деятеля, также его внутренняя, духовная гармония, с новым светом.

**Ключевые слова:** *Мкртич Саргсян, Арутюн Овнатан, интервью, человек, писатель, общественный деятель, поэзия, письмо, роман, новелла.*